Սիփան

Մակերես՝ 11.76կմ^2

Բնակչություն՝ 264

Գյուղ Արագածի տարածաշրջանում, Երեւան-Սպիտակ ավտոմայրուղու վրա: Մարզկենտրոնից գտնվում է 48 կմ հեռավորության վրա: Նախկինում մտել է Երեւանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ, ունեցել է Թամբ, Պամբ, Պամբակ, Պամբ, Փամբակ, Փամբ Քրդի անվանումները: Սիփան է վերանվանվել 1978 թ-ին:

Գյուղը տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերին: Գտնվում է ծովի մակարդակից 2100 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

Գյուղում տարբեր ժամանակերում տարբեր է եղել ազգային կազմի համամասնությունը: Ներկայումս էլ մեծ բաժին ունեն քրդերը (եզդիները), որոնք տեղափոխվել են Արեւմտյան Հայաստանից եւ Կարսի մարզից: 1873 թ-ին գյուղն ունեցել է 292, 1897 թ-ին՝ 382, 1939 թ-ին՝ 443, 1959 թ-ին՝ 350, 1979 թ-ին՝ 473, 1989 թ-ին՝ 391 բնակիչ: Համայնքի բնակչությունը կազմում է 324 մարդ, որից 48% տղամարդիկ են, 52%՝ կանայք: Բնակչության մեջ մինչաշխատունակները կազմում են 40%, աշխատունակները՝ 51%, հետաշխատունակները՝ 9%: Գյուղն ունի 48 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Տնտեսության մասնագիտացման ճյուղը մսաբրդատու անասնապահությունն է: Զբաղվում են մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Պահուստային հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 70%, որոնց մեջ մեծ է արոտավայրերի տեսակարար կշիռը՝ 358հա եւ վարելահողերը՝ 44 հա:

Արդյունաբերություն չունի:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: